ՌԾ ԳԱՑ-երի հիման վրա վերլուծություն 2025

1.1.1.1 Կրթական ծրագրերի ձևաչափի և այլ անհրաժեշտ փաստաթղթային հենքի ստեղծում

Վերջնարդյունք՝ Վերանայված կրթական ծրագրերի ձևաչափ, արտոնման և մշակման, հաստատման մշտադիտարկման ու վերանայման փաստաթղթային հենքի առկայություն: Կրթական ծրագրերի կազմակերպման և կառավարման համար անհրաժեշտ փաստաթղթային հենք

Հենանիշ՝ կիրառության մեջ դրված նոր /վերանայված փաստաթղթեր ոլորտը կարգավորող փաստաթղթերի հակասություններ

ԳԱՑ - Կրթական ծրագրերի կազմակերպման և կառավարման համար անհրաժեշտ փաստաթղթային հենք

ՈԳԱԿ-ի պաշտոնական կայքէջում տեղադրված են բոլոր այն հիմքերը, որոնք թույլ են տալիս ՄԿԾ պատասխանատուներին իրականացնել ՄԿԾ փաթեթի կազմում, ՄԿԾ մշտադիտարկում և բարելավում: Դրանք են՝

1. ՀԱԱՀ կրթական ծրագրերի մշակման, հաստատման, մշտադիտարկման և բարելավման ընթացակարգը
2. ՀԱԱՀ նոր կրթական ծրագրերի ստեղծման հայտի ձևաթերթը.
3. Մասնագիտության կրթական ծրագրի ձևաչափը

- ՄԿԾ մասնագիրը
- Ուղղահայաց և հորիզոնական համահարթեցման ձևաչափը
- Բենչմարքինգի ձևաչափը:

4. Առարկայական ծրագրի ձևաչափ

1.1.1.2 Վարչական և ՊԴ կազմի շարունակական վերապատրաստումներ

Վերջնարդյունք՝ Վերապատրաստման ծրագրի վերջնարդյունքներին տիրապետող ՊԴ և վարչական կազմի առկայություն

Հենանիշ՝ Կրթական ծրագրերի կազմակերպման և կառավարման ոլորտում հմտությունների կարիք ունեցող անձնակազմ

ԳԱՑ - Վերապատրաստման ծրագրի վերջնարդյունքները յուրացրած թողարկող և սպասարկող ամբիոնների աշխատակիցների թիվ,

ՈԳԱԿ-ի կողմից իրականացրած “Կրթության որակի ապահովման մեխանիզմներ”, “ՄԿԾ մշտադիտարկում և ներքին աուդիտ”, “Առարկայական ծրագրերի կազմում”, “Առարկաների կրեդիտների հաշվարկ” թեմաներով մեկամսյա վերապատրաստմանը մասնակցել է համալսարանի տարբեր ֆակուլտետների 74 աշխատակից:

Ստորև աղյուսակում ներկայացված է վերապատրաստվողների թվաքանակն ըստ ամբիոնների .

Ստորաբաժանում	**Վերապատրաստվածների քանակ**
1. Հասարակական գիտությունների ամբիոն	9
2. Ագրարային էկոնոմիկայի ամբիոն	2
3. Ագրոբիզնեսի կառավարման և քաղաքականության ամբիոն	5
4. Ֆինանսահաշվային ամբիոն	1
5. Հողային և ջրային ռեսուրսների կառավարման	3

ամբիոն	
6. Մեքենասարքավորումների ճարտարագիտություն և տեխնիկական անվտանգություն	5
7. Ավտոտրակտորների և գյուղատնտեսական մեքենաների ամբիոն	3
8. Անասնաբուժական սանիտարական փորձաքննության, սննդամթերքի անվտանգության և հիգիենայի ամբիոն	4
9. Անասնաբուժություն	2
10. Մորֆոլոգիայի և կենդանագիտության ամբիոն	1
11. Բուսաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոն	6
12. Ընդհանուր քիմիայի ամբիոն	1
13. Անասնաբուծական մթերքների վերամշակման տեխնոլոգիաների ամբիոն	8
14. Հայոց և օտար լեզուների ամբիոն	10
15. Մեքենասարքավորումների ճարտարագիտության և տեխնիկական անվտանգության ամբիոն	2
16. Բուսաբուծության և հողագիտության ամբիոն	3
17. Անտառագիտության և ագրոէկոլոգիայի ամբիոն	9
Ընդհանուր	74

1.1.1.4 Միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրություն, բենչմարքինգ

Վերջնարդյունք՝ Փաստաթղթերի վերլուծության իրականացում

Հենանիշ՝ Կրթական ծրագրերի իրականացված բենչմարքինգ բակալավրի և մագիստրատուրայի մասով, ուսումնասիրված և տեղայնացված լավագույն փորձ (բենչմարքինգի արդյունքները)

ԳԱՑ՝ Տեղայնացված առաջավոր փորձի առկայություն յուրաքանչյուր ՄԿԾ-ում

2025 թվականի ընթացքում ՈԳԱԿ-ի կողմից գնահատվել է հետևյալ կրթական ծրագրերի բենչմարքինգը՝

Բակալավր

Տրանսպորտային համակարգեր և լոգիստիկա

Ագրոմեխատրոնիկա և ճշգրիտ ռոբորատեխնիկա

Ագրոէկոլոգիա

Բույսերի պաշտպանություն

Ագրոնոմիա, սելեկցիա, գենետիկա

Անտառային տնտեսություն և բնակավայրերի կանաչապատում

Մագիստրատուրա

Կանաչ տնտեսության ռազմավարական կառավարում

Կայուն քաղաքներ և կանաչ տեխնոլոգիաներ

Պարենամթերքի տեխնոլոգիա

Բակալավրի 6, մագիստրոսի 3 կրթական ծրագրեր գնահատվել են ըստ ՈԱՇ/ՈՈՇ-ի սահմանված ակնկալվող վերջնարդյունքների և ուղարկվել են հաստատման համալսարանի մեթոդական,ապա գիտական խորհուրդ:

1.2.1.2 ՊԴ կազմի կարողությունների զարգացման իրականացման համար ներդրումների պլանավորում

Վերջնարդյունք՝ Ամբիոնների կարիքների բացահայտում, վերապատրաստման ուղղությունների հստակեցում

ԳԱՑ՝ 6.1.2.1 Համապատասխան ֆինանսական հատկացումներ

6.1.2.2 իրականացված միջոցառումների/վերապատրաստումների քանակ:

2025 թվականի հոկտեմբերին իրականացվել է համալսարանի ՊԴԿ կարիքների գնահատման հարցում: Հարցմանը մասնակցել է 80 աշխատակից, ոնդ որում՝.

- Ագրոնոմիական ֆակուլտետ՝ 36 մասնակից
- Ագրարային ճարտարագիտության՝ 9 մասնակից
- Պարենամթերքի տեխնոլոգիաների՝ 11 մասնակից
- Ագրոբիզնեսի եվ տնտեսագիտության՝ 20 մասնակից
- Անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության՝ 4 մասնակից:

Վերլուծությունից պարզ դարձավ, որ ՊԴԿ-ի մեծ մասը (68 %) կարիք ունի տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրերի (Kahoot, Miro, Padlet, edX, FutureLearn, Skillshare, AutoCAD, solidworks, Google գործիքակազմ) վերապատրաստման, մնացածը՝ կրթության որակի բարելավմանը միտված վերապատրաստումների, որոնցից են՝ դասավանդման նոր մեթոդների կիրառում, ակադեմիական գրագիտություն միջազգային բարձր վարկանիշավորում ունեցող ամսագրերում հոդվածներ ներկայացնելու:

1.2.3.1 Առարկայական ծրագրերում հետազոտական և տեխնոլոգիական նորարարությունների ներառում

Վերջնարդյունք՝ հետազոտական և տեխնոլոգիական նորարարություններին համահունչ մինչև 25 %-բովանդակային բարելավված առարկայական ծրագրեր

Հենանիշ՝ Մասնագիտական զարգացումների համահունչություն՝ հետազոտական տվյալների ներգրավմամբ

ԳԱՑ՝ 1.1.1.7.1 Մասնագիտական, հետազոտական և տեխնոլոգիական նորարարություններին համահունչ առարկայական ծրագրերի ճկուն թարմացումներ:

Առարկայական ծրագրերի ձևաչափը հնարավորություն է ընձեռնում նպատակի, դրված խնդիրների, վերջնարդյունքների և հանձնարարությունների միջոցով գնահատել որքանով է ծրագիրը նորարարական: Առարկայական ծրագրերի մեծ մասն արդեն իսկ ամբողջությամբ արտացոլում են ՄԿԾ-ների վերջնարդյունքների ձեռք բերման հստակ մեխանիզմներ, հանձնարարականներ և առաջադրանքներ, նաև գրական աղբյուրներ և տեղեկատվական հղումներ: Սակայն, համալսարանում դեռ առկա են առարկայական ծրագրեր, որոնք ունեն բարելավման կարիք:

1.3.2.1. Լրամշակել ՄԿԾ փաթեթներն ըստ ազգային և միջազգային պահանջների

Ներքին աուդիտի նպատակն էր գնահատել կրթական ծրագրերի իրականացման դրական արդյունքները, դրանք դարձնելով օրինակելի փորձ, նաև վերհանել թերությունները՝ մշակելով բարելավման մեխանիզմներ: Կարևոր էր գնահատել կրթական ծրագրերի իրականացման ժամանակ հնարավոր ռիսկերը, մշակել դրանցից խուսափելու հնարավոր միջոցառումներ:

Հենանիշ՝ Իրականացնել կրթական ծրագրեր ներքին աուդիտ

ԳԱՑ՝

- Ներքին աուդիտ անցած ՄԿԾ փաթեթների քանակ,
- Արտաքին աուդիտ անցած ՄԿԾ փաթեթների քանակ

2025 թվականի փետրվարի 2-ից ՈԳԱԿ-ի նախաձեռնությամբ իրականացվեցին ՄԿԾ փաթեթների ներքին աուդիտների իրականացման մեխանիզմներ թեմայով

վերապատրաստումները, որոնց մասնակցեցին բոլոր ֆակուլտետների դեկանները և ՄԿԾ պատասխանատուները: Կազմվեցին ՄԿԾ ներքին աուդիտի իրականացման խմբեր, մշակվել պլան և փաստաթղթեր: ՈԳԱ կենտրոնը ստացել է տարբեր մշակվածության մակարդակում գտնվող 16 ՄԿԾ ներքին աուդիտ, որից մագիստոսական 1, բակալավրիատի 15: Ներկայացված ՄԿԾ-ների ներքին աուդիտներից ավարտուն է 8-ը:

Ֆակուլտետ	Մագիստրոսական ՄԿԾ-եր			Բակալավրիատի ՄԿԾ-եր		
	Քանակը	Ներկայացված	Ավարտված	Քանակը	Ներկայացված	Ավարտված
Ագրոնոմիական	5	-	-	5	5	2
Պարենամթերքի տեխնոլոգիաների	3	-	-	3	3	3
Ագրոբիզնեսի և տնտեսագիտության	2	-	-	2	2	0
Անասնաբուժական-բժշկագիտության և անասնաբուծության	3	0	0	3	2	2
Ագրարային ճարտարագիտության	5	1	1	6	3	-
Ընդամենը	18	1	1	17	15	7

Ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում 2025 թ-ի հոկտեմբերին առաջին արտաքին աուդիտի փորձն իրականացվել է Վիեննայի «Բնական ռեսուրսների և բնական գիտությունների համալսարանի (BOKU)», դոկտոր, դոցենտ Ռեյնհարդ Նոյգշվանդտների կողմից «Ջերմատնային ագրոտեխնոլոգիա»,

«Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա» բակալավրաիական, «Օրգանական գյուղատնտեսություն» մագիստրոսական ԿԾ–երի շրջանակներում:

1.3.2.2 ՄԿԾ ընթացիկ մոնիտորինգների իրականացում

Հենանիշ՝ Իրականացնել ԿԾ-երի մշտադիտարկում՝ արդյունքում վերհանելով առկա խնդիրները, բացահայտելով օրինակելի փորձը

ԳԱՑ՝ Բարելավված ԿԾ-երի քանակ

2025 թ-ի ընթացքում, ինչպես յուրաքանչյուր ուսումնական տարի, ՈԳԱԿ-ի կողմից իրականացվել են ՄԿԾ-երի մշտադիտարկում ՈԱ հետևյալ մեխանիզմներով՝

- Դասալսումների մշտադիտարկում
- Դասավանդողների գնահատում ուսանողների միջոցով (հարցումներ)
- Դասավանդողների կարիքների գնահատում (հարցումներ)
- Ուսանողների խորհրդատվություններից բավարարման կարիքների վերհանում (հարցումներ)
- ՈՒսումնառողների վարչական անձնակազմից բավարարվածության գնահատում (հարցումներ)
- ՈՒսանողների հետ ֆոկուս խմբային աշխատանք

Հատկանշական է Արդյունաբերական խորհուրդների մասնակցությունը ՄԿԾ մշտադիտարկման գործընթացում: Խորհուրդների և ՄԿԾ պատասխանատուների համագործակցությունը նպաստեց կրթական ծրագրերի արդիականացմանը՝ առավել մոտեցնելով դրանց վերջնարդյունքներն աշխատաշուկայի պահանջներին:

Այս համագործակցության արդյունքում մի շարք ծրագրեր արդեն ենթարկվել են բարելավման: Մասնավորապես՝

- ✓ «Սննդամթերքի անվտանգություն» կրթական ծրագիրը 2023 թվականին վերանայվել է գործատուների պահանջով. փոփոխվել է ուսումնական պլանը և սահմանվել են հստակ վերջնարդյունքներ, որոնք ապահովում են ոլորտում կայուն մրցունակություն:
- ✓ «Պարենամթերքի տեխնոլոգիա» կրթական ծրագրի բարելավման հիմք են հանդիսացել ուսանողների առաջարկները, որոնք ձևավորվել էին աշխատանքի կիսամյակի ընթացքում: Վերջնարդյունքների բացերի լրացման նպատակով վերանայվել է ուսումնական պլանը. մասնավորապես, երկու առարկան փոխակերպվել են պարտադիրից պարտադիր-կամընտրայինի, ինչը հնարավորություն է տալիս բոլոր մասնագիտացումներում ուսանողներին ընտրել առարկան իրենց ոլորտի առանձնահատկություններին համահունչ:
- ✓ Հիմք ընդունելով եվրոպական և ամերիկյան առաջավոր փորձը՝ ամբողջությամբ վերանայվել է «Հողային և ջրային ռեսուրսների ճարտարագիտություն» կրթական ծրագիրը, որը ներդրվել է 2023-2024 ուսումնական տարում:
- ✓ Ագրոնոմիական ֆակուլտետում բարելավման մեխանիզմներից է դարձել նաև կամընտրային առարկաների ներառումը: Այս փոփոխությունը ձևավորվել է արդյունաբերական խորհրդի առաջարկների և համահունչ համալսարանների բենչմարք ուսումնասիրությունների հիման վրա և սկսել է իրագործվել 2025 թ-ի մայիսից:

1.3.2.3 ՄԿԾ հավատարմագրման չափանիշներին համապատասխան ինքնավերլուծությունների իրականացում

Վերջնարդյունք՝ ինքնավերլուծություն, մոնիտորինգի հաշվետվություններ, բարելավման ծրագրեր

Հենանիշ՝ 3 ՄԿԾ ինստիտուցիոնալ հավատարմագրման շրջանակներում

ԳԱՑ՝ մոնիտորինգի ենթարկված ՄԿԾ-ների քանակ, հավատարմագրման չափանիշներին համապատասխան ինքնավերլուծությունների քանակ

Ինստիտուցիոնալ հավատարմագրումից առաջ, բոլոր ստորաբաժանումներից հավաքագրվեցին SWOT վերլուծություններ, որոնցից պարզ դարձավ, որ ստորաբաժանումները, մասնավորապես ամբիոնները, դեռ ի վիճակի չեն ճիշտ գնահատելու իրենց կատարած աշխատանքը: Վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ կային ամբիոններ, ովքեր ավելի շատ աշխատանքներ էին իրականացրել, քան ներկայացրել են: Սա բացատրվում է նրանով, որ վերլուծությունների իրականացման ժամանակ երբեմն անտես են ստորաբաժանման գործողությունների կատարողականները, որտեղ ամբողջ տեղեկատվությունը հավաքագրված և ներկայացված է: Նշենք ավելին, SWOT վերլուծությունների ժամանակ արտացոլված չէին ԳԱՑ-երը: Սակայն, ամբողջ տեղեկատվությունը ՈԳԱԿ-ի կողմից հավաքագրվեց և օգտագործվեց ինքնավերլուծության զեկույցում:

1.4.1.1 Գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտի ներկայացուցիչների պահանջներին համահունչ կարճաժամկետ ծրագրերի մշակում և իրականացում

Վերջնարդյունք՝ Կարճաժամկետ ծրագրեր, ագրոպարենային ոլորտի վերապատրաստված շահառուներ

Հենանիշ՝ Կարճաժամկետ, միջնաժամկետ ծրագրերի վերլուծություն, որակի գնահատում

ԳԱՑ՝

- Գյուղատնտեսության և ագրոպարենային ոլորտի վերապատրաստված անձանց քանակ,
- իրականացված կարճաժամկետ ծրագրերի քանակ
- շահակիցների բավարարվածությունը կարճաժամկետ ծրագրերից:

Համալսարանն իրականացնում է տարբեր ձևաչափերի ուսուցողական ծրագրեր՝ կարճաժամկետ դասընթացներ, վարպետության դասեր, սեմինարներ և վերապատրաստման դասընթացներ, որոնք ուղղված են ինչպես ոլորտային մասնագետների, այնպես էլ պետական ծառայողների մասնագիտական հմտությունների զարգացմանն ու արդիականացմանը: 2025թ-ին համալսարանը ներկայացրել է ԿԳՄՍՆ 26 կարճաժամկետ ծրագրեր, որոնք հաստատվել են համալսարանի գիտական խորհրդի կողմից:

2022-2025թթ-ը համալսարանի տարբեր ստորաբաժանումների կողմից իրականացված ԿՃ-ին մասնակցել են շուրջ 3200 մասնակից, որոնցից 20%-ն աշխատանք է գտել, 67 %-ը բարելավվել է մասնագիտական դիրքը աշխատավայրում:

ՈԳԱԿ տնօրեն **Աննա Դաշտոյան**

22.10.2025թ.